

Ս. Ս. ՆԱԶԱՐՅԱՆ

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905—1907) ռուս և այլ ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը նույնպես ապրել է հասարակական-քաղաքական կյանքի փոթորկալից ժամանակներ: Պատերազմ է հայտարարվել այն ամենի դեմ, ինչ հին է եղել, թեկուզ օգտավետ ու գնահատելի: Որոշակիորեն սահմանազատվել են հասարակական հոսանքները, կազմակերպվել են քաղաքական նոր կուսակցություններ: Առաջին հերթին պայքար է հայտարարվել «հնության» կնիքը կրող ազգային հաստատությունների, հատկապես եկեղեցու և նրա սպասավորների դեմ: Քաղաքական կուսակցությունների (սոցիալ-դեմոկրատական, սոցիալիստ-հեղափոխական և այլն) կողմից մոռացության են տրվել եկեղեցու դերն ու նշանակությունը, հոգևորականությունը որակվել է որպես «ձրիակեր տարր», ոտնահարվել են նրա իրավունքներն ու հեղինակությունը:

Հայ եկեղեցու նկատմամբ նման հալածական վերաբերմունքը, բնականաբար, առաջ է բերել հոգևոր դասի վրդովմունքը: Բողոքի ձայն են բարձրացրել հոգևորականության առաջադեմ ներկայացուցիչները: Նրանցից առաջինը Գրիգորիս (Տեր-Ծզնիկ) քահանա Երզնկյանը իր բողոքի խոսքը տեղ հասցնելու, եկեղեցու և հոգևոր դասի դերն ու նշանակությունը վերականգնելու, հատկապես քրիստոնյա բարոյախոսի մտքի, հոգու և սրտի լույսը հասարակության լայն շրջաններում տարածելու նպատակներով Թիֆլիսում լույս է ընծայել «Հովիվ» (1906—1909), ապա «Հովիտ» (1910—1917) հոգևոր-բարոյական, պատմական-հասարակական և մանկավարժական շաբաթաթերթերը:

Գրիգորիս քահանա Երզնկյանը<sup>1</sup> ծնվել է 1852 թվականի ապրիլի 15-ին, կոպա գավառի Հաղպատ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է ծրնրնդավայրի վանական դպրոցում: 1872 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, իսկ 1881-ին՝ Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտը, որտեղ աշակերտել է հայտնի մանկավարժ, պատմաբան Հ. Գուրևիչին, հետևել նրա հայացքներին:

Գր. Երզնկյանն իր մանկավարժական գործունեությունն սկսել է Կարսում, որտեղ 1881—1895 թթ. եղել է Լուսավորչյան և Շուշանյան ուսումնարանների տեսուչը: Այնուհետև նա հրավիրվել է Ալեքսանդրապոլ և աշխատել Վիճակային տղայոց և Արղության օրիորդաց դպրոցներում: Ապա տեղափոխվել է Թիֆլիս և կրոն ու երգեցողություն է դասավանդել Ներսիս-

<sup>1</sup> Գր. քահ. Երզնկյանի կյանքի և գործունեության հիմնադրույթը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում: Կենսագրական տվյալները քաղված են «Հովիվ» շաբաթաթերթի էջերից (1906, № 26, 1907, № 32) և նրա ազգականների մոտ պահպանվող արխիվային փաստաթղթերից:

յան դպրոցում (18 տարի) և Մոզնու ս. Գայանյան օրիորդաց դպրոցում (25 տարի): Գր. Երզնկյանը միաժամանակ 33 տարի քահանայագործել է Թիֆլիսի վանքի ավագ եկեղեցում: Նա որոշ ժամանակ եղել է նաև ս. էջմիածնի կոնսիստորիայի անդամ:

Գր. Երզնկյանի գրչին են պատկանում բազմաթիվ ձեռագիր և տպագիր աշխատություններ («Կրոնների պատմությունը», «Դասագիրք կրոնի» Ա. Բ. Գ. գրքերը, «Հայ քրիստոնեական դավանագիտության դասագիրք», «Կառուցումն և օծումն հայոց եկեղեցու», «Քրիստոնեական բարոյագիտություն», «Դպրոցական առողջապահություն», «Ուղեցույց թվաբանության դասավանդման», «Տարրական աշխարհագրություն», «Ճանապարհորդություն դեպի Զայալօղլի», «Պատմություն մանկավարժության» և այլն):

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հոգևորական գործիչը հայաթվել է, հետապնդվել կառավարության կողմից: Նա իր մահկանացուն կնքել է Թիֆլիսում, 1928 թվականին:

Գր. քահ. Երզնկյանի պարբերականներն իրենց տեսակի մեջ արևելահայ իրականության մեջ եղել են երկրորդը «Արարատ» (1863—1919, Վաղարշապատ) ամսագրից հետո: «Արարատը» համարվել է ս. էջմիածնի Հայրապետական աթոռի պաշտոնական օրգանը և հանդես է եկել կրոնական ավանդություններին, ծեսերի մեկնաբանություններին վերաբերող և հատկապես գիտական հոդվածներով: «Հովիվ» և «Հովիտ» պարբերականները եղել են ժողովրդի առօրյա կյանքի, նրա հոգսերի, պահանջների խոսափողները և քրիստոնեության բարոյական սկզբունքների տարածողները: «Հովիվը»,— գրված է թերթում,— որպես եկեղեցական թերթ, առիթ կունենա ժամանակակից շատ խնդիրներ զարթեցնելու, բացատրելու և ամենայն սառնությամբ քննադատություն կատարելու մինչև նրանք բավարար լուծումն ստանան: Նա կլինի անկողմնապահ, անաշու, միշտ կհսոսի ճշմարտությունը և կը պահե արդար կողմը: Նա ամենքի համար կլինի, կպատկանի ամենքին և կաշխատի հետաքրքրել և զբաղեցնել նրանց ուշադրությունը, որոնց սըրտին մոտ են եկեղեցու շահերը և եկեղեցականության բարեփոխման գործը ներկա պահանջների համաձայն»<sup>2</sup>:

Պարբերականների շուրջը համախմբված են եղել ժամանակին գրական, հասարակական, մանկավարժական, հրապարակախոսական գործունեությամբ աչքի ընկած հոգևորական և աշխարհական գործիչներ (Հարություն քահ. Ճուղուրյան, Իսահակ Հարությունյան, Պետրոս Սիմոնյանց, Սեդրակ Մանդինյան, Գարեգին Ծնգիրբայան, Բենիկ վարդապետ, Եղիշե քահ. Գեղամյանց, Հայկ Տեր-Աստվածատրյան, Կարապետ Թեմուրազյան, Սամսոն Չերքեզյան, Խաչատուր (Քուշուկ) Հովհաննիսյան (Մ. Շովրյան), Մուշեղ Բագրատունի, Միսակ Արամյանց և ուրիշներ):

Նյութերը զետեղվել են հետևյալ բաժիններում. «Եկեղեցական», «Պատմական», «Մանկավարժական», «Հասարակական», «Գրական», «Մատենախոսություն», «Գեղարվեստ», «Դատաստանական», «Մամուլի տեսություն», «Վարչական», «Օրվա խնդիր» և այլն:

«Հովիվ» և «Հովիտ» շաբաթաթերթերի զխավոր նպատակներից մեկն է եղել՝ վեր հանել դարերի ընթացքում մոռացության մատնված քրիստոնեական բարոյախոսության հիմնական սկզբունքը, որն է՝ «Մի ցանկացիր ուրիշին այն, ինչ չես ցանկանում քեզ»: Ըստ թերթերի նման սկզբունքով առաջնորդվող հասարակությունը կարող է բարոյապես կատարելագործվել, քա-

<sup>2</sup> «Հովիվ», 1906, թ. 1, էջ 4: Այսուհետև շաբաթաթերթից հղումները շարադրանքում փակագծերի մեջ տարիք, թիվը, էջը:

դաքակորթվել և հասնել «դրախտանման կյանքի»: «Ամենամեծ հեղափոխութունը,— գրել է «Հովիվը»,— որ կարող է առաջ բերել մի ազգ, մի ժողովուրդ իր կյանքի մեջ՝ այդ կուլտուրական առաջադիմությունն է. այդ՝ մտավոր, տնտեսական, այլ նաև ֆիզիկական զարգացման և կատարելագործության առաջադիմությունն է» (թ. 27, էջ 418):

Մեծ հույսեր կապելով հեղափոխական օրերի ընձեռած ազատությունների հետ, հոգևորական խմբագիրը հավատացած է եղել, թե եկեղեցին նույնպես կձեռքազատվի անցյալի կաշկանդումներից, կստանա ազատ գործելու հնարավորություններ: «Վերջապես,— գրել է նա,— ամեն մի տխուր երևույթ հոգևոր աշխարհում և հայ ժողովրդի մեջ իր գույնով և արժեքով կարծանագրվի, հրապարակ կհանվի և միջոցներ ձեռք կառնվեն արմատախիլ անել նրան անհատի, ընտանիքի և հասարակության միջից» (1906, թ. 1, էջ 4):

Գր. Երզնկյանի շաբաթաթերթերում տպագրվել են եկեղեցու վերափոխման վերաբերյալ մշակված ընդարձակ ծրագրեր: Առաջին հերթին պահանջվել է վերանայել «Պոլոժենիեն», և բարձրացվել է եկեղեցու իրավունքները ու կանոնների բարեփոխման հարցը: Գր. Երզնկյանի «Պոլոժենիեն պետք է փոխվի» հոդվածաշարում (թ. 23—29) առաջադրվել է վերականգնել Հայ առաքելական եկեղեցու ժողովրդավարական սկզբունքը, փոխել եկեղեցու վարչական հնացած ձևը, սահմանել հոգևոր ղեկավար մարմինների ընտրական նոր համակարգ՝ փակ և դադարի քվեարկությամբ, հոգևոր գործերի ղեկը հանձնել համապատասխան կրթություն ստացած հոգևորական և աշխարհական անձանց ձեռքը, վերանորոգել եկեղեցին ժամանակի պահանջների համաձայն, ամրապնդել եկեղեցու և ժողովրդի միջև կապը:

Գր. Երզնկյանի համոզմամբ ազգի և հայրենիքի բարօրության հրաշխիքը պետք է փնտրել Աստուծո սիրով միացած սեփական ազգի բոլոր խավերի եղբայրական միության մեջ: Պետրոս Սիմոնյանցի «Միությունն է ուժ, իրավունք և փրկություն» առաջնորդող հոդվածաշարում (թ. 28, 30) վստանդավոր են համարվել այն քաղաքական կուսակցությունները, որոնք ուսական առաջին հեղափոխության օրերին մոռանալով ազգայինը, համազգային շահի անունից ելույթներ էին ունենում, քարոզելով «անհայրենիք անհատի նյութական բարեկեցություն»: Նման գաղափարախոսությունը, ինչպես հեղինակն է անվանել «կոսմոպոլիտությունը» որակվել է որպես «հյուժող ախտ, առաջնորդող դեպի վերջնական մահ...»: Ըստ նրա հայրենիքի ապագան պահանջում է ձուլումն հայ ազգապահանդակական կուսակցության մեջ, միություն և միություն, որովհետև «միությունն է միայն անհաղթելի ուժ, իրավունք և փրկություն» (1907, թ. 28, էջ 434): Պետրոս Սիմոնյանցը, որը ժամանակին եղել է ազգային-պահանդակական հոսանքի տեսաբաններից մեկը և սերտ կապեր է ունեցել խմբագրի՝ Գր. Երզնկյանի հետ (այդրև է նրա տանը և եղել նրա ընտանիքի սիրված անդամներից մեկը), իր դավանած հայացքներով որոշակի ներգործություն է ունեցել «Հովիվ» և «Հովիտ» թերթերի գաղափարական ուղղության վրա:

Ղազարոս Աղայանի «Մի ամենակարևոր պահանջ» հոդվածաշարում (թ. 17—18) պաշտպանվել են դարձյալ նույն տեսակետները: Հեղինակը ազգի բախտավորությունը, բարօրությունը տեսել է հասարակության բոլոր անդամների եղբայրական միության մեջ: «Զուգությունն է մայր բարեաց,— գրել է նա,— անզուգություն ծնող շարեաց»: Նրա կարծիքով ճշմարիտ աստվածասիրության ոգով համակված հասարակության մեջ քրիստոնեական բարոյախոսության հիմնական սկզբունքի կատարումը յուրաքանչյուրի համար պետք է լինի ունակություն, արյուն ու մարմին դարձած, ժառանգաբար որդոց-որդի անցած մի ազգային սուրբ սովորություն:

Գր. Երզնկյանի թերթերում քննադատական խոսք է ասվել եկեղեցու և հոգևորականության հասցեին: Քննադատվել են հոգևորականներն իրենց առաքելությունը չկատարելու, ժողովրդի, հատկապես արևմտահայության նրկատմամբ անտարբեր վերաբերմունք ունենալու համար: «Ի՞նչ է անում մեր ս. էջմիածինը» առաջնորդող հոդվածում գրված է. «... Կիլիկիո կաթողիկոսը հրաժարված, Երուսաղեմի միաբանությունը պառակտված ու իր ներքին կյանքի այլանդակություններով զբաղված: Տաճկահայոց ժողովրդի մի մասը դեռ բնավեր ու քաղցած, մյուս մասը մոլորված ու գայլ դարձած իր իսկ հարազատների համար: Տաճկահայոց ազգային եկեղեցիները թատերական բեմի են փոխվում, վանքերը կողոպտվում և անարգանքի ենթարկվում թեթևամիտ անկրոն ջահելների ձեռքով, բարքերն ընկած, վարքերն աղավաղ: Եվ այս բոլոր քաղաքական, կրոնական, բարոյական, մտավոր սխալանքներին աչքը տնկած սպասում է ոսոխը, որ մի հարվածով ջնջե տաճկահայոց ազգային արտոնությունները, մի գետով հոսեցնե հայ ժողովրդի մեջ մնացած արյունը» (1909, թ. 44, էջ 690):

«Եկեղեցական իրավաբանություն» խորագրի տակ տպագրված հոդվածներում բարձրացվել են հոգևորականների իրավունքների վերաբերյալ որոշ պահանջներ: Գր. Երզնկյանի թերթերը ընթերցողներին ծանոթացրել են ս. էջմիածնի հոգևոր Մինոդի ժողովների արձանագրություններին, կաթողիկոսական կոնդակներին, հրահանգներին, հայ եկեղեցու անցյալի պատմությանը: Ի լուր եկեղեցու հակառակորդների, հավաստի փաստերով ապացուցվել է, որ հայ եկեղեցին եղել է ժողովրդական, և որ «հայ ազգը իր այդ սուրբ ամրոցին ապավինած ապրել է մինչև այժմ, այսօր էլ ապրում է և կապրի ապագայում էլ» (1906, թ. 14, էջ 1):

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին ընկերային շարիքի դեմ ուղղված պայքարը «Հովիվ» և «Հովիտ» թերթերի կողմից որակվել է որպես արդարության, եղբայրության, ազատության համար մղված համաժողովրդական շարժում: Թերթերում բարձրացվել է այն միտքը, թե առաջադիմության, մարդկության բարօրության ձգտումներով տոգորված Ռուսաստանի զավակները ճշմարտության հաղթանակի համար «ենտվել են հրապարակ՝ Իսահակին ոգևորությամբ հեղաշրջելու հին խավարի մնացորդները— մարդկային շահագործումը»:

Ազատագրական այդ համընդհանուր պայքարում կարևոր է համարվել և եկեղեցու դերը: Ըստ պարբերականների եկեղեցին և կրոնը իրենց բարոյախոսությամբ ծառայել են նույն գաղափարների իրականացմանը, ինչ և պայքարի ելած քաղաքական կուսակցություններն ու առաջադեմ մարդկությունը: «Զարմանալ պետք է մեր սոցիալիստների վրա,— գրել է «Հովիվը»,— որ կրոնի դեմ խոսելու հավակնություն ունենալով, կուրանում են և շեն ուզում տեսնել, թե մեր դարու հեղափոխական շարժումները մեծ դաշնակցություն են գտնում նոր-կտակարանի գաղափարների մեջ, եթե ձգտում են մարդկային ընկերության մի այնպիսի ձև տալ, որ փրկություն դառնա կեղծված ու զրկված բազմությունների համար» (1906, թ. 19, էջ 294): Քաղաքական կուսակցությունների և կրոնի գաղափարների միջև տարբերությունը համարվում էր լուրջ այն, որ եթե եկեղեցին շարժումներին մասնակցում էր խոսքի ուժով, ապա կուսակցությունները՝ զենքի, ինչպես «Հովիվում» է գրված. «Մինչ առաքելների շրջանում միակ կովի զենքն էր խոսքը, կենսաբար խոսքը, այժմ այդ բոլորի հետ միացրել են և զենքը, մարդասպանությունը, արյունը..... Կովի մի ձև, որի հետ երբեք չի կարող հաշտվել մեր եկեղեցին» (թ. 1, էջ 5):

Ղնկերային հարցերին անդրադառնալիս Գր. Երզնկյանի պարբերական-

ները այն կարծիքն են հայտնել, թե քանի դեռ գյուղացին հողի տերը չէ «միշտ ու հանապազ կլինի հարուստ նա, ով տերն է հողի»: Ընդգծելով հասարակութայն մեջ երկու հակադիր բեռներին մեկուսի բուրժուազիայի, մյուսում՝ պրոլետարիատի գոյությունը, նա փորձել է բնութագրել յուրաքանչյուրի էությունը առանձին-առանձին: Ըստ նրանց բուրժուազիան այն դասակարգն է, որ իր ապրուստը ձեռք է բերում ոչ թե սեփական աշխատանքով, այլ զանազան միջոցներով՝ տների վարձից, անշարժ կալվածքներից ստացված եկամուտներով, իսկ պրոլետարիատը ապրում է միայն իր սեփական ֆիզիկական աշխատանքով:

Ըստ այդ պարբերականների, եթե աշխարհի բախտավոր տերը՝ հողատերը հասնի այն գիտակցության, որ ինքը արտոնյալ չէ, որ հողագուրկ գյուղացին նույնպես կարող է գնել հող և դառնալ հողատեր, ապա այն ժամանակ կվերանան հակասությունները: Այսինքն, թերթերը ընկերային հարցի լուծման ճանապարհը որոնել են մարդ-անհատի բարոյական կերպարի կատարելագործման, հասարակության հոգևոր և մտավոր կյանքի զարգացման, ուզային-մշակութային գործունեության ծավալման մեջ: Քաղաքական նման հայացքներ քարոզելու և տարածելու նպատակներով խմբագիրը դիմել է և Տոլստոյի ստեղծագործություններին, տպագրել նրա «Քաղաքական գործիչներին», «Միակ միջոցը», «Ռուսական հեղափոխության նշանակության մասին» և այլն: «Քանի դեռ իշխանությունը ոմն մարդկանց բռնությունն է մյուսների վրա, — ասում է գրողը, — ուրեմն այն պետք է անպայման ոչնչանա և կոչնչանա ինքնիրեն, երբ մարդիկ բոլորը կգիտակցեն իշխանության անօգտակար և վնասակար լինելը» և «կղեկավարվեն ընդհանուր բարիքի ու արդարության գիտակցությամբ»: Դրա համար հումանիստ գրողը պարտադիր է համարել աստվածային օրենքների կատարումը: Եվ իր «Միակ միջոցը» հոդվածի համար որպես բնաբան ընտրել է Մաթ. մարգարեի հետևյալ խոսքերը. «Ամեն ինչ, որ կամենում եք, թե ձեզ անեն մարդիկ, այնպես էլ դուք արեք նրանց, վասնզի այս են իսկական օրենքներն ու մարգարեները» (1907, թ. 32, էջ 500):

1914 թվականին, երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, Գր. Երզնկյանը իր ժողովրդի և՛ արևելահայ, և՛ արևմտահայ հատվածների ազատագրությունը ակնկալեց Ռուսաստանի հաղթանակից: «Մենք կարծում ենք, — գրել է նա, — թե Արևելքի բռնապետության վերջին բախումն է այս Արևմուտքի հետ, որ պիտի ջախջախվի ռուսական հաղթական զենքով և Հայաստանը Ռուսիոյ հովանու տակն անցնելով, ընդմիշտ պիտի ազատվի Արևելքի բռնություններից»<sup>3</sup>: Նա հայության սրբազան պարտքն է համարել՝ ամեն ինչով, ունեցվածքով, կյանքի գնով օժանդակել Ռուսաստանին, որի «Բնդանոթն է որոտում հայի արյան գետերով ողողված դաշտերում», և որը եղել է միշտ «հայության պատմական հովանավորողը»:

Գր. Երզնկյանի պարբերականները քննադատաբար են անդրադարձել եվրոպական երկրների դիվանագիտությանը: Ալ. Ռոտինյանցի «Եվրոպայի դատապարտելի վերաբերմունքը դեպի Հայաստանի վիճակը և նրա արյունաքամ դատը Բեռլինի վեհաժողովում» ծավալուն հոդվածաշարում (1908, թ. 17, էջ 264—265, թ. 18, էջ 281—282) մանրամասն քննարկվել են Բեռլինի վեհաժողովում (1878) Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի փոփոխման հանգամանքները, ցույց է տրվել եվրոպական երկրների դիվանագիտության կեղծ էությունը: «Բայց անխիղճ դավաճան Եվրոպան, — գրված է այնտեղ, — դավաճանեց ազգին և փոխարկեց այդ արդարադատ շնորհը

<sup>3</sup> «Հովիտ», 1914, թ. 42, էջ 659:

(16-րդ հոդվածը) մեծ թագավորի, և կորզելով հաղթողի ձեռքից հաղթական գաշնագիրը, Բեռլինի վեհաժողովում նոր ի նորոյ ենթարկեց իր հայեցողության այդ կենսական հոդվածը, որ ի օգուտ էր հայ ազգիս, և նրան փոխարինեց մի այլ հոդվածով, որ ամենին հայտնի է: Դա ազգակործան 61-րդ հոդվածն է» (1908, թ. 17, էջ 265):

«Հովիվ» և «Հովիտ» պարբերականները խրախուսել են հայորդիներին, հորդորելով նրանց՝ կազմել կամավորական զնդեր և ուսական բանակի հետ միասին հակահարված տալ իմպերիալիստական երկրների ոտնձգություններին: Գր. քահ. Երզնկյանի քաղաքական հայացքները վկայում են, որ նա «ենեցել է ուսական կողմնորոշում: Նրա հրապարակախոսական գործունեությունը, հրատարակած թերթերը կարևոր դեր են խաղացել հայ և ուս ժողովուրդների հոգևոր ու քաղաքական կապերի ամրապնդման գործում:



«Հովիվ» և «Հովիտ» շաբաթաթերթերը միաժամանակ լինելով մանկավարժական պարբերականներ, իրենց էջերում մեծ տեղ են հատկացրել հայ դպրոցի պատմության, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության հարցերի քննարկմանը: Առանձին հոդվածներով հանդես են եկել Գր. Երզնկյանը, Ս. Մանդինյանը, Իս. Հարությունյանը, Հ. Տեր-Միրաքյանը, բժիշկ Ա. Շահնազարյանը և ուրիշներ: Գր. քահ. Երզնկյանը «Ուղեցույց պատմության» հոդվածաշարում (թ. 12, թ. 16) անդրադարձել է պատմություն առարկայի դասավանդման մեթոդներին: Նրա համոզմամբ այդ առարկայի ուսուցումը ոչ միայն պետք է հարստացնի աշակերտի գիտելիքները հարազատ ժողովրդի անցյալի պատմական դեմքերի ու դեպքերի իմացությամբ, այլ միաժամանակ պետք է նպաստի նրա բարոյական կերպարի ձևավորմանը:

Հետևելով ուս և արևմտաեվրոպական առաջադեմ մանկավարժների հայացքներին, Գր. քահ. Երզնկյանը իր պարբերականների միջոցով հայ ուսուցիչներին ծանոթացրել է մանկավարժության նորագույն մեթոդներին: Այսպես, «Մանկավարժական պատգամներ» խորագրի տակ տպագրված նյութերը պրոպագանդել են դասի վարման, մտավոր և ֆիզիկական դաստիարակության կազմակերպման վերաբերյալ առաջադեմ մանկավարժների խորհուրդներն ու պատգամները: Նա իր «Դպրոցական կարգապահություն» հոդվածաշարում կարևորելով կարգապահության դերը ինչպես դաստիարակության, այնպես էլ ուսուցման գործում, գրել է. «Կարգապահությունը հարկավոր է ոչ միայն այն բանի համար, որ ուսուցիչը ավելի կանոնավոր դասն ավանդե, այլ որ երեխաների կամքը զարգացնե, և նոցա իրենց կրթերը հրպատակեցնե, այսինքն՝ որոշյալ սահմաններում պահպանել սովորեցնե» (1907, թ. 35, էջ 556): Նա պահանջել է ուսուցիչներից՝ շօտազործել պատժիչ դաժան միջոցներ (ծեծ, վախ, ֆիզիկական ներգործություն և այլն): «Հովիվ» թերթում տպագրվել են նրա «Մանկավարժություն» սովորածավալ աշխատությունից հատվածներ (թ. 40—42), ուր ընթերցողը կգտնի տեսական դրույթներ մայրենի, ինչպես և ուսաց և օտար լեզուների դասավանդման վերաբերյալ:

Գրեթե բոլոր մանկավարժական հոդվածներում ուսուցման և դաստիարակության հարցերը քննարկվել են շողկապված: Որպես հիմք ընդունվել է. «Առանց դաստիարակության ուսուցումը բացասական ուժ է և ավերիչ» խորիմաստ դրույթը:

Գր. քահ. Երզնկյանի համոզմամբ ժամանակի դպրոցը պետք է պատրաստեր հաստատուն կամքի տեր, կյանքում ինքնուրույն գործելու ունակ,

ազնիվ, շիտակ սերունդներ: Իսկ դրա համար դպրոցը պետք է ազատ լիներ ամեն տեսակի, հատկապես կուսակցական կաշկանդումներից: «Ժողովուրդների քաղաքական և հասարակական կյանքում կուսակցությունք,— գրել է նա,— անհրաժեշտ են նոցա առաջադիմության համար. խոսք շունենք դորա դեմ, միայն դպրոցներն ազատ պիտի լինին կուսակցական ոգուց, որպեսզի նոցա մեջ կրթվող մատաղ սերունդը դաստիարակվի ազատ ամեն կուսակցական ոգուց (նախապաշարմունքից), դուրս գա դպրոցից լուսավոր մտքով: Բարի զգացմունքներով օժտված սրտով, իբրև ինքնուրույն գործունեության ընդունակ էակ» (1906, թ. 12, էջ 177—178):

Կարևոր է և այն հանգամանքը, որ հոգևորական գործիչը իր թերթերում հետևողական պայքար է մղել դպրոցներում աշխարհաբար գրական լեզվի դասաժամերը ավելացնելու համար, գտնելով, որ աշխարհաբարը պետք է լինի ուսուցման պարտադիր լեզու: Նրա կողմից բարձրացվել է նաև արևմրտահայ դպրոցներում՝ արևելահայ լեզվի, արևելահայ դպրոցներում՝ արևմրտահայ լեզվի դասավանդման անհրաժեշտության հարցը: Նրա կարծիքով այդ հանգամանքը կնպաստի հայոց լեզվի «երկու ճյուղերի մերձեցմանն ու հարստացմանը»:

Գր. Երզնկյանի պարբերականներում քննարկվել են նաև դպրոցներում նկատվող բացասական երևույթները, ուսուցման և դաստիարակության կազմակերպման թիրի կողմերը: Այդ թերացումները բացատրվել են մասնագիտական կադրերի, բարձրագույն դպրոցի բացակայությամբ:

Ինչպես ժամանակի առաջադեմ մտածողներից շատերը, այնպես էլ Գր. Երզնկյանը բարձրացրել է էջմիածնի Գևորգյան ճեմարանի վերակառուցման հարցը: «Ժամանակն է և հրամայողական պահանջ,— գրել է նա,— Մայր աթոռում ստեղծել բառիս բուն կանոնավորությամբ գիտական մի ակադեմիա երեքամյա մասնագիտական դասընթացներով: ... Ժամանակն է վերջապես, որ հայ ազգը գոնե մի հատիկ սեփական բարձրագույն կրթական հաստատություն ունենա» (1909, թ. 15, էջ 233):

Շատ արժեքավոր նյութեր են պարունակում հայ դպրոցների պատմությանը նվիրված հոդվածաշարերը («Թիֆլիսի Հովնանյան-Մարիամյան օրիորդաց ուսումնարանի պատմությունից» (1906, թ. 31—թ. 39), «Հիշողություններ Գայանյան օրիորդաց ուսումնարանի մասին» (1909, թ. 5—թ. 8) և այլն), որոնք լուսաբանում են անցյալի դպրոցների հիմնադրման և գործունեության պատմությունը: Ընդհանրապես դպրոցների պատմությանը վերաբերող հոդվածները (հեղինակներ Կ. Թեմուրազյան, Զ. Գրիգորյան և ուրիշներ) լրացնում ու հարստացնում են հայ դպրոցի պատմության էջերը և հավաստի նյութեր են հաղորդում այսօր հայ դպրոցի պատմությունն ուսումնասիրողներին:

Գր. Երզնկյանի պարբերականներում կարևոր տեղ է տրվել ղեղարվեստական գրականությանը: Ընկերային աղաղակող հակասությունների, աշխատավորի աղքատ կյանքի տխուր պատկերներն են ներկայացված Գևորգ քահ. Մկրտումյանի («Խաչի առաջ», «Կալանավորի գատիկը», «Մշակ-վարժապետ», «Դարձյալ գարուն», «Դարդիմանդ բժիշկ», «Արծվիկ» և այլն), Հակոբ Ղազարյանի («Քիրվա Մստոն» և այլն), Ընծայացու («Հերիք չէ եղրայք», «Ծաղիմ դարմանում» և այլն), Միքայել Ենգիբարյանի («Երկու զդացում», «Նըշանվածը» և այլն) և ուրիշների ստեղծագործություններում:

Ռուսական առաջին հեղափոխության օրերին թերթերը տպագրել են մարտաշունչ բանաստեղծություններ: Դրանցից առավել աչքի են ընկել Գևորգ քահ. Մկրտումյանի գործերը, որոնցով հեղինակը ազգային-ազատագրական պայքարի կոչ է արել:

Տապառի ձայնը աշխարհ է առել,  
 Կռանի հարված իրար խառնվել,  
 Խորտակված սաչիդ անիվն են շինում,  
 Փշրված մարմնիդ կյանք տալ են ուզում:  
 Էլ ինչ ես նիրհում, շուտ ոտքի ելիր,  
 Բաճուկ կոներիդ կուռ շղթան փշրիր,  
 Այդ քեկորներից կռած դուր, ուրագ  
 Ձեռդ առ շուտով, հասի՛ր տեղ արագ: (1906, ք. 20, էջ 815)

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բանաստեղծ Մ. Են-գիբարյանը պատրաստակամությամբ է հայտնում իր անձը, ընտանիքը զո-հել Հայրենիքի ազատության համար:

Ո՛վ, իմ վիրավոր սիրուն Հայրենիք,  
 Քեզ գոհ եմ քերում ինձ և ընտանիքս՝:

Ուշագրավ են թերթերում տպագրված գրախոսականները, որոնցում բար-ձրը են գնահատված Հովհաննես Հովհաննիսյանի, Սմբատ Շահազիզի, Դա-զարոս Աղայանի, Մուրացյանի, Արփիար Արփիարյանի, Լևոն Շանթի և ուրիշ-ների ստեղծագործությունները: Մուշեղ Բագրատունին իր Pessimist ծածկա-նունով տպագրած «Հովհաննես Հովհաննիսյան» ծավալուն գրախոսականում (1912, ք. 17—ք. 20) արժեքավորել է բանաստեղծի արվեստը, բացահայտել նրա տաղանդի յուրահատկությունները: «Հովհ. Հովհաննիսյանի առանձին առավելություններից մեկն էլ հենց այն է եղել համեմատած իր նախորդ-ների հետ,— գրել է Բագրատունին,— որ նա թողել է նախկին կաշկանդիչ ձևերը, իր զգացումները չի բռնադատել միայն որոշ խնդիրների համար հուզ-վել, հեռացել է քնարերգության մեջ ինչ-որ կանխորոշող միտումներ մտցնե-լուց և դարձել է ազատ բանաստեղծ, ազատ իր հոգու աշխարհում, ինքնիշ-խան իր սրտի զեղուն և հարափոփոխ զգացումների մեջ: Այդ քայլն է, որ իրոք նրան նոր բանաստեղծների հայր է դարձրել և մեզ ուսահայերիս աշ-խարհիկ բանաստեղծության համար այդպիսով ազատ ոգու, անկեղծ զգա-ցումների սիրուն զոհարներ տվող քնարերգուների շարքն է սկսվել»<sup>4</sup>:

Բանաստեղծ Սմբատ Շահազիզի մանկավարժական գործունեությունը բարձր է գնահատվել բժիշկ Ա. Շահնազարյանցի «Բանաստեղծ-քաղաքացին դպրոցական նվիրական ուխտի ասպարեզում» (1908, ք. 1, էջ 9—11) հոդ-վածում:

Սմբատ Շահազիզի հայրենանվեր գործունեության մասին են պատմում 1898 թ. Կ. Պոլսի պատրիարք Մ. Օրմանյանին նրա գրած նամակները<sup>5</sup>, 1895 թ. թուրքական յաթաղանից մազապուրծ հայ որբուկների խնամքի և դաստիարակության համար բանաստեղծը Մոսկվայում կազմակերպել է հան-գանակություն և գումարները ուղարկել Մ. Օրմանյանին՝ մանկատների, որ-բանոցների կառուցման համար: Ընդհանրապես պատմական փաստերով հա-րուստ այս նամակները այսօր էլ ունեն իրենց կարևոր արժեքը: Դրանց մեջ, ինչպես «Հովիվ» թերթում է գրված. «... օր օրի վրա արձանագրված են հա-յության կրած արհավիրքները, բերված են ապացույցներ, հաճախ կոնկրետ թվերով, թե որքան մեծ է եղել կրած հարվածը» (1909, ք. 34, էջ 538):

<sup>4</sup> «Հովիտ», 1914, ք. 44, էջ 698:

<sup>5</sup> «Հովիտ», 1912, ք. 19, էջ 294:

<sup>6</sup> Նամակների շարքը խմբագրությանն է հանձնել հնագետ, պատմաբան, քանասեր, Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Խաչատուր (Քուչուկ) Հովհաննիսյանը: Նա-մակները տպագրվել են «Հովիվ» թերթի 1908—1909 թթ. համարներում Աղանայի կոտո-րածի առիթով, երբ թշվառ հայրենիքը նորից վտանգի մեջ էր և հազարավոր որբուկներ խնամքի կարիք ունեին:



Մուշեղ Բագրատունու «Ունայնության քարոզը» գրախոսականում? Լեոն Շանթի «Հին աստվածներ» դրաման գնահատվել է որպես գեղեցիկ ու նոր երևույթ: Դրամայում, որտեղ արտահայտված են հեղինակի ուսուսական առաջին հեղափոխությունից հետո ապրած հուսալքման տրամադրությունները, հերոսներից յուրաքանչյուրը յուրովի է ձգտում մոռանալ երկրայինը և սփոփանք է գտնում պատրանքների աշխարհում: Հերոսներից ամեն մեկի ապրած տառապանքը հեղինակը ներկայացրել է կենդանի և նոր ձևերով, մի բան, որը ինչպես գրախոսն է նկատել «... ավելի նորություն, գեղեցկություն է մտցրել դրամայի մեջ»:

Մեկ այլ գրախոսականում (հեղինակ՝ Բոն-Ամի) «Հին աստվածներ» դրաման համարվել է մի կատարյալ գործ՝ գրված գեղեցիկ լեզվով, բարձր ոճով: «Պետք է ասել, — կարդում ենք այնտեղ, — որ գրվածքը խիստ գեղարվեստական է, խորը հոգեբանական, մշակված տիպերի երկ է, մի այդպիսի երկ պատիվ է բերում մի ազգի, այդ դեռ քիչ է, մի այդպիսի երկ մի ազգի վերածնության ազդակ է, իսկ և Շանթի ոսկեծղի լեզվի մասին ես կարծում եմ, որ պետք է լռե ամեն մի քննադատություն»<sup>7</sup>:

Գր. Երզնկյանի պարբերականներում բարձր գնահատականների են արժանացել մի շարք հայ խմբագիրներ, հրապարակախոսներ, թատերական դորժիչներ, մշակույթի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ: Ստ. Նազարյանը համարվել է «ռուսահայ հրապարակախոսության հայրը», որը «անցյալ դարի 60-ական թվականների մեր հասարակական կյանքի ղեկավարող ուժն է եղել և իր շուրջն է համախմբել այսպես, թե այնպես ժամանակի առաջադեմ տարրերին և գործել է ազնիվ, անկաշառ կերպով»<sup>8</sup>:

Այսպիսով, Գր. Երզնկյանի՝ անցյալի երախտավոր հոգևոր գործչի անձնուրաց կյանքի ու գործունեության արգասիքը ներկայացնող «Հովիվ» և «Հովիտ» պարբերականները մեկ ամբողջ տասնամյակ (1906—1917) հոգևոր բավարար սնունդ են մատուցել հայ ընթերցող հասարակայնությանը, նպաստելով նրա բարոյակրթական կյանքի հարստացմանն ու զարգացմանը:

**С. С. НАЗАРЯН — Еженедельники «Овив» (1906—1909) и «Овит» (1910—1917) Григориса Ерзнкяна.** — Известный в своё время духовный деятель, педагог Григорис Ерзнкян на страницах издаваемых в Тифлисе еженедельников пропагандировал основные принципы христианской морали, предлагал программы реформирования церкви, обсуждал вопросы общественной жизни национально-освободительной борьбы армянского народа. Издания одновременно затрагивали педагогические проблемы, задачи воспитания и образования молодежи. В них печатались произведения и критические статьи на них О. Ованнисяна, С. Шахазиза, К. Агаяна, Л. Шанта. Еженедельники целое десятилетие снабжали духовной пищей армянскую читательскую общественность.

<sup>7</sup> «Հովիտ», 1913, № 10, № 13:

<sup>8</sup> Նույն տեղում, № 5, էջ 79:

<sup>9</sup> Նույն տեղում, № 21, էջ 825: